

Ա. Յ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Լ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐԱՔԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2012

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա. Հ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
Լ. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏՊ- 378:809.27:809.155(072)
ՊՄՊ- 74.58+81.2 Արար + 81.2 Պար
Ի 830

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի գիտական խորհուրդը

ԻՄՐԱՅԵԼՅԱՆ Ա. Հ., ՊԵՏՐՈՍՅԱՆ Լ. Գ.

Արաբերենի և պարսկերենի դասավանդման ուսումնա-
մեթոդական ուղեցույց /Ա.Հ. Իսրայելյան, Լ.Գ. Պետրոս-
յան: – Եր.: ԵՊՀ հրատ., 2012 թ., 16 էջ:

Սույն ուղեցույցը նպատակ ունի ուսանողին ներկայացնել լեզվական հմտությունների վերաբերյալ պահանջները՝ տիրապետելի դարձնել արաբերեն և պարսկերեն բանավոր և գրավոր խոսքին, խորացնել հաղորդակցման կարողությունները, զարգացնել մասնագիտական թեմաներով խոսքն ընկալելու և խոսք կազմելու ունակությունները, ինչպես նաև ծանոթացնել մասնագիտական բառապաշարին ու դիվանագիտական տերմիններին: Բացի հիմնական դասընթացներից, հեղինակները դասապրոցեստում ուսանողին ամփոփ կերպով կծանոթացնեն նաև Արաբական Արևելքի և Իրանի պատմությանը, նրանց մշակույթներին և ավանդույթներին:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոսներին՝ ուղեցույցի պատրաստման գործում մասնագիտական աջակցության համար:

Նախատեսված է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետում արաբերեն և պարսկերեն դասավանդողների համար:

ՀՏՊ-
ՊՄՊ-

ISBN

© ԵՊՀ հրատարակչություն, 2012 թ.

©
©

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ**

Մասնագիտական դասընթացի ուսուցման սկզբունք ասելով պետք է հասկանալ որոշակի մեթոդ¹, որի հիմքում ընկած են նրա հիմնական ելակետային դրույթները: Ընդհանրապես օտար լեզուների ուսուցման մեջ մեթոդ հասկացությունը օգտագործվում է երկու տարբեր իմաստներով՝

ա) որպես մեթոդական համակարգ կամ մեթոդական ուղղություն՝ ընդհանուր իմաստով,

բ) որպես ուսուցման եղանակներից մեկը՝ մասնավոր իմաստով:

Առաջին դեպքում մենք խոսում ենք քերականաթարգմանական, ուղիղ, խառը, գիտակցական-համադրական և արդյունավետ մեթոդների մասին:

Երկրորդ դեպքում մեթոդ տերմինի հասկացությունը՝ ավելի մասնավոր իմաստով, հենվում է դիդակտիկայի տվյալների վրա: Դիդակտիկայում մեթոդներ են համարվում դասախոսի և ուսանողի աշխատանքի այն եղանակները, որոնց միջոցով հասնում են գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների ձևավորման²: Այստեղ մեծ ուշադրություն պետք է դարձնել նյութի բացատրմանն ու ցուցադրմանը:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում առաջին չորս կիսամյակներում արաբերենի և պարսկերենի ուսուցման մեթոդի յուրահատկությունը հենց տարատեսակ վարժություններն են: Այստեղ մեծ ուշադրություն ենք դարձնելու **բանավեճային, խաղային, պրոբլեմային** և **ինտերակտիվ** (փոխներգործուն) ուսուցման ակտիվ մեթոդներին: Եվ հատկապես **երկխոսությունների** միջոցով պետք է ապահովել հաղորդակցությունը: Լսարանում երկխոսությունը պետք է արտահայտված

¹ Մեթոդական սկզբունքները մշակել է պրոֆ. Ի.Վ.Ռախմանովը՝ ներկայացնելով հետևյալ հակադրությունները՝

ա) Համադրություն-ներունակություն,

բ) Լեզվական երկկողմանի փորձի առկայություն, խոսքի հենարանի բացակայություն,

գ) Տարբերակված և ոչ տարբերակված ուսուցում,

դ) Զուգընթաց-հաջորդական ուսուցում:

² *Общая методика обучения иностранным языкам. Под ред. А.А. Миролубова, И.В. Рахманова, М.1967, стр 49-50*

լինի հետևյալ ձևաչափերով՝

1. խմբային՝ դասախոս-լսարան,
2. գույգերով՝ ուսանող-ուսանող և դասախոս-ուսանող,
3. համագործակցային՝ աշխատանք փոքր խմբերով:

Սկզբունքային առումով դասը կբացատրվի և կհանձնարարվի՝ համապատասխանաբար այն ստուգելու համար և կտրվեն յուրացված նյութը ամրապնդելու առաջադրանքներ ու վարժություններ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ուսուցման միջոցները ներառում են ուսումնական ողջ ընթացքի ղեկավարման և կազմակերպման գործառույթը: Ուսուցման միջոցները ժամանակակից աշխարհում բազմաթիվ և բազմազան են: Սակայն «ուսումնական միջոցներ» մեթոդական հասկացությունը հիմնականում ընդգրկում է դասագիրք, նկարներ, աղյուսակներ, լտողական, տեսողական և լսատեսողական տարբեր ձեռնարկներ: Դասավանդման տեսության մեջ և պրակտիկայում ուսուցման միջոցների առանձին բաղկացուցիչների դերի և տեղի վերաբերյալ տարբեր տեսակետներ կան: Օրինակ, լսատեսողական մեթոդի կողմնակիցները հիմնական դերը հատկացնում են ուսուցման տեխնիկական կամ համակարգչային միջոցներին՝ թերագնահատելով դասագիրքը³: Սակայն մասնագիտական դասընթացի ուսուցման համար վերոհիշյալ բոլոր միջոցներն էլ ուղակիորեն կարևոր և նույնքան պարտադիր են: Շատ մեթոդաբաններ ուսումնամեթոդական միջոց են համարում այն միջավայրը, ուր բնակչության 80%-ից ավելին խոսում է օտար լեզվով՝ տվյալ դեպքում արաբերեն և պարսկերեն: Եվ հենց այդ միջավայրն է, որ ավելացնում և լրացնում է այն բացը, որը ձեռք չի բերվել ուսումնառության տարիներին:

³ Общая методика обучения иностранным языкам. Под ред. А.А. Миролубова, И.В. Рахманова, М.1967, стр 49-50,55

**ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ**

Տեխնիկական միջոցների պարտադիր և արդյունավետ օգտագործումը հնարավորություն կտա լսարանում ստեղծել արաբերենի և պարսկերենի մթնոլորտ, որը կխթանի ուսանողների խոսքային ակտիվությունը: Լսողական միջոցները պետք է օգտագործվեն դասընթացի ուսուցման բոլոր փուլերում: Դա կստեղծի արաբերենի և պարսկերենի արհեստական միջավայր, կգարգացնի խոսքը լսելով հասկանալու, մենախոսության և երկխոսության կարողությունները:

Տեղեկատվության ընդունման ուղիները	Ուսուցման միջոց հասկացությունը		
	Ուսուցման նյութը	Ուսուցման միջոցը	Տեխնիկական սարքը
Լսողական	Արաբերենը և պարսկերենը՝ բանավոր ձևով	Համակարգիչ, DVD և VCD համակարգեր	Համակարգիչ, DVD և VCD համակարգեր, դիկտոֆոն և այլն
Տեսողական	Արաբերենը և պարսկերենը գրավոր խոսքի ձևով	Շտրհանդես կամ ցուցահանդես, նկարներ	Digital Board, համակարգիչ-պրոյեկտոր, հեռուստացույց, արբանյակային ալեհավաք
Լսատեսողական	Բանավոր խոսքի միջոցով առարկաների խոսքային իրադրությունների նկարագրություն	Ֆիլմեր, երկխոսություններ	Digital Board, համակարգիչ-պրոյեկտոր, հեռուստացույց, DVD և VCD համակարգեր

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ՈՒՂԻՆԵՐԸ**

Մասնագիտական դասընթացի վարման ընթացքում մենք առաջնորդվելու ենք տեղեկատվության ընդունման չորս հիմնական ուղիներով՝

1. Լսողական
2. Տեսողական
3. Լսատեսողական
4. Online համակարգով շփման միջոցով:

**ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ
ՅՈՒՐԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Առանց բառապաշարի անհնար է գրելու, ընթերցելու, խոսելու և լսելով հասկանալու կարողությունների զարգացումը, տեղեկատվության ընդունումը և հաղորդումը:

Ուսուցման գործնական նպատակը արաբերենի և պարսկերենի բառապաշարից օգտվելու կարողությունների ձեռք բերումն է: Այդ իսկ պատճառով ուսանողների բառապաշարի հարստացման խնդիրը առաջնակարգ է համարվում: Պարսկերենի բառապաշարի 50 տոկոսից ավելին կազմում են արաբերենից փոխառությունները, որոնք անցել են պարսկերենի բառապաշար կա՛մ որպես նոր բառեր, որոնք արտահայտում են կրոնի, կենցաղի, գիտության, հասարակական կյանքի և այլ բնագավառների զանազան հասկացություններ, կա՛մ էլ գործածության մեջ են մտել որպես պարսկերեն բառերին համարժեք նույնանիշներ:

Արաբերեն և պարսկերեն բառը խոսքում օգտագործելու համար պետք է կատարել հետևյալ գործողությունը՝ հիշողության մեջ գտնել բառը, ճիշտ արտասանել այն , ընտրել համապատասխան քերականական ձևը, տվյալ բառը կապակցել այլ բառերի հետ և ապա ներառել բառը ընդհանուր ենթակոնտեքստի մեջ:

Բառի իմաստը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել դրա ձևական հատկանիշները (գրաֆիկական, քերականական) և վերջին-

ներս գուգակցել բառական և քերականական իմաստների հետ⁴: Արաբերենին և պարսկերենին հատուկ հոմանիշների անգերագանցելի քանակի առկայությունը ավելի է դժվարացնում բառապաշարի ռեցեպտիվ տիրապետումը:

Բացի *ռեալ* բառապաշարից (*ռեպրոդուկտիվ, ռեցեպտիվ* ⁵), որը ուսանողները յուրացնում են ուսուցման գործընթացի ժամանակ, կան մեծ թվով բառեր, որոնց ուսանողները նախկինում չեն հանդիպել, բայց տեքստն առաջին անգամ ընթերցելիս կարող են կռահել: Նման բառերը կազմում են ուսանողների պոտենցիալ բառապաշարը: Դրանք են՝

- լեզուներում ընդհանուր արմատ ունեցող բառերը,
- բազմիմաստ բառերի տարբեր նշանակությունները,
- քարդ և ածանցավոր բառերը:

Ուսանողներն այս բառերի իմաստն կարող են կռահել բառակազմական վերլուծությամբ և բառարմատների ընդհանրությունների հիման վրա:

Բառապաշարի արդյունավետ ուսուցման հիմնական պայմանը տարբերակված մոտեցումն է՝ կախված նրա ռեպրոդուկտիվ կամ ռեցեպտիվ յուրացումից: Պոտենցիալ բառապաշարի բառերի մի մասը ուսանողները կարող են ինքնուրույն հասկանալ, սակայն հիմնական մասը վարժեցման հատուկ աշխատանք է պահանջում: Բառապաշարը յուրացնելիս ուսանողներն առնչվում են 3 դասակարգերի հետ.

- ա) մայրենիում, արաբերենում և պարսկերենում իմաստային ծավալներով համընկնող հասկացությունների,
- բ) մայրենիում, արաբերենում և պարսկերենում իմաստային ծավալներով չհամընկնող հասկացությունների, որոնցում առկա են վերոհիշյալ լեզուներում ավելի լայն և ավելի նեղ հասկացությունները,
- գ) մայրենի լեզվում բացակայող հասկացությունների՝ օրինակ.

⁴ Общая методика обучения иностранным языкам. Под ред. А.А. Миролубова, И.В. Рахманова, М.1967, стр 55-76

⁵ Ռեպրոդուկտիվ բառապաշար ասելով հասկանում ենք այն բառերը, որոնցից օգտվում են սեփական մտքերը գրավոր և բանավոր արտահայտելիս, մինչդեռ ռեցեպտիվ բառապաշարի մեջ մտնում են այն բառերը, որոնցից օգտվում են ունկնդրելիս և ընթերցելիս:

lunch, pizza, vip և այլն:

Արաբերեն և պարսկերեն ուսումնասիրելիս ուսանողները հանդիպում են տարբեր հասկացությունների, որոնց ընկալումը մեծ դժվարություն է ներկայացնում, այդ իսկ պատճառով նպատակահարմար չէ դրանք ուսանողին միանգամից մատուցելը:

Նախնական շրջանում նրանց գիտակցությանը պետք է հասցնել այն հասկացությունները, որոնք կան նաև մայրենի լեզվում: Հաճախ երկու լեզուներում բովանդակությամբ համընկնող հասկացությունները իմաստային ծավալներով կարող են չհամընկնել:

Համաձայն օտար լեզուների դասավանդման նոր ծրագրի՝ խոսքային գործունեության տարբեր տեսակներում օգտագործելու համար, սովորողը պետք է յուրացնի 950-1000 ակտիվ բառային միավոր: Ուսումնական նպատակով բառապաշարի ընտրության էությունը կայանում է նրանում, որ **արաբերեն և պարսկերեն բառերի բազմազանությունից ընտրվեն այն բառերը, որոնք բավարար և անհրաժեշտ են նպատակների իրականացման համար:** Բառապաշարի ուսուցման նպատակն է խոսքային իրադրություններում բառի գործածության կամ տեքստում բառի ճանաչման հմտությունների ու կարողությունների զարգացումը, որը կապահովի տառաձանաչության և բառաձանաչության իրազեկություն բաղադրիչը՝ նոր բառապաշարի ծանոթացում, նախնական ամրապնդում, բառիմաստի բացահայտման եղանակներ, վարժությունների համակարգ և նրանց օգտագործումը խոսքային գործունեության տարբեր տեսակներում:

ԾԱՆՈԹՍՑՈՒՄ ԼԵԶՎԱԿԱՆ ՆՅՈՒԹԻՆ

Լեզվական նոր նյութի մատուցումը մեթոդական գրականության մեջ նշվում է տարբեր տերմիններով՝ ներմուծում, բացատրություն, ծանոթացում կամ տեղեկատվության հաղորդում, որոնք հաճախ օգտագործվում են որպես հոմանիշներ: Լեզվական նյութի ծանոթացումը մենք բաժանել ենք մի քանի բաղադրիչների.

- լեզվական նոր նյութի ներմուծում կամ ցուցադրում,
- իմաստի, ձևի ճանաչման բացահայտում,
- տվյալ երևույթի հասկացման ստուգում,

- վերարտադրում, որի նպատակն է նոր նյութի մտապահումը և վարժությունների միջոցով նախնական կարողությունների ձևավորումը:

Վարժությունների միջոցով պետք է հասնել արաբերեն և պարսկերեն բառերի ճիշտ գործածությանը և ճանաչմանը: Եթե բառական հմտությունները զարգացած չեն, ուսանողը ի վիճակի չէ բաշխելու իր ուշադրությունն իմաստային տեղեկատվության և լեզվական ձևի՝ տվյալ դեպքում բառերի միջև: Ծանոթանալ արաբերեն և պարսկերեն նոր բառապաշարին նշանակում է.

- նոր բառերի յուրացման դժվարությունների բացահայտում՝ կապված բառիմաստի, ձևի և գործածության հետ,
- բառերի ուսուցման նպատակի ճշտում,
- բառերի խմբավորում՝ ըստ իրենց բարդության,
- բառապաշարի հարստացման միջոցներ,
- բառակազմության տեսակների (ածանցում, բարդացում, հապավումներ, քարացած ձևեր և փոխառություններ) ընկալում:

Փորձը ցույց է տալիս, որ գործնական պարապմունքների ժամանակ խոսքային բնույթի վարժությունների կիրառումը նոր բառի ծանոթացման փուլում մեծ նշանակություն ունի նյութի մտապահման և համապատասխան հմտությունների զարգացման համար: Բառիմաստը բացահայտելիս կարելի է դիմել այնպիսի եղանակների, ինչպիսիք են կոնտեքստը, բառակազմական մոդելների վերլուծությունը, հոմանիշներն ու հականիշները: Այս եղանակների մեջ է մտնում նաև արաբերենով և պարսկերենով բառի բացատրությունը:

ԲԱՌԱԿԱՆ ԵՎ ԽՈՍՔԱՅԻՆ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառական և խոսքային հմտությունների և կարողությունների ձևավորումը ենթադրում է բազմաբնույթ վարժությունների կատարում: Բառերի արդյունավետ յուրացման պայմաններից մեկը ներմուծումից հետո ամրապնդող վարժությունների կատարումն է, այլապես հաջորդ դասին այդ նոր բառերը կմոռացվեն:

Բառերի, բառակապակցությունների և դարձվածքների արդյունավետ ուսուցման հաջորդ պարտադիր պայմանը բառային վարժությունների նախապես բանավոր կատարումն է՝ անկախ նրանից, թե բառերը յուրացվում են ռեցեպտիվ, թե ռեպրոդուկտիվ նպատակով: Այս մոտեցումը սերտորեն կապված է բառերի հնչյունաշարժողական պատկերների ստեղծման հետ, իսկ վերջիններս ձևավորվում են լեզվական նյութի բանավոր ընկալման և արտաբերման՝ այսինքն բանավոր վարժությունների կատարման ընթացքում: Բառապաշարի յուրացման համար շատ կարևոր են լեզվական և խոսքային վարժությունները: Լեզվական վարժությունների միջոցով յուրացվում է բառի ձևը, իմաստը և գործածությունը, ինչպես նաև բառի գործածության հետ կապված գործողությունները: Այդ համակարգում ընդգրկվում են վարժությունների տարբեր տեսակներ, որոնք փոխկապակցված են միմյանց հետ⁶:

Բառական վարժությունների մեջ կարևոր հայեցակետ պետք է համարել լեզվական ռեպրոդուկտիվ վարժությունների խնդիրը. բառային միավորները յուրացնելով՝ զարգացնել բառակապակցություններ կազմելու և դրանք ամբողջական արտահայտություններում գործածելու կարողությունը⁷: Ռեպրոդուկտիվ վարժությունները զարգացնում են բառային միավորների ավտոմատացված գործածությունը առանձին նախադասության կամ մի քանի նախադասություններից բաղկացած արտահայտության մեջ, որը կարող է հանդիսանալ ինչպես մենախոսության, այնպես էլ երկխոսության միավոր: Վերոհիշյալ վարժությունները պետք է լինեն ընդօրինակման, բառական միավորի ճիշտ տեղադրման, նախադասության կամ արտահայտության մեջ նրա ձևափոխման, կապակցման և ընդլայնման փոխկապակցման հարթություններում: Մեթոդական պրակտիկան սխալ է համարում այն, որ նոր նյութի ուսուցման համար առաջնային հիմք է վերցվում վերոհիշյալ վարժությունների օգտագործումը⁸, քանի որ ուսանողը հանդիպում է մի շարք դժվարությունների. նախ նա պետք է մտածի իր ասելիքի բովանդակության մասին, ապա՝ այդ մտածածը արտահայտի արաբերենով և պարսկերենով: Ահա թե ինչու խոսքի արդյունավետ և մատչելի ուսուցման

⁶ Общая методика обучения иностранным языкам. Под ред. А.А. Миролубова, И.В. Рахманова, М.1967 г., стр 158.

⁷ Общая методика обучения иностранным языкам, стр 158-159.

⁸ Общая методика обучения иностранным языкам, стр 159.

համար պետք է կատարել խոսքային վարժություններ:

Բառային վարժությունների ավտոմատացված փուլին հաջորդող խոսքային վարժությունները պետք է նախատեսեն մտավոր գործողությունների զարգացում՝ խնդիր-վարժությունների աստիճանական բարդացմամբ: Այս փուլում պարտադիր պայման է ուսանողի կողմից **ստեղծագործական վարժությունների** կատարումը, որոնք նրան հնարավորություն կտան օգտագործել յուրացրած նյութը՝ մտքի արտահայտման ժամանակ:

ՊԱՀԱՆՁՆԵՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արաբերենի և պարսկերենի ուսուցման կարևորագույն սկզբունքներից է համարվում հմտությունների զարգացումը: Ուստի մենք առաջարկում ենք մի քանի հիմնական պահանջ.

- ուսանողի մոտ ձևավորել տառաձանաչման և ընթերցողական կանոնների իրազեկություն, որպեսզի նա կարողանա գրել և կարդալ ոչ բարդ տեքստեր,
- ուսանողի մոտ ձևավորել ուղղախոսական իրազեկություն, որպեսզի նա կարողանա շատ պարզ իրադրություններում երկխոսությունների միջոցով հաղորդակցվել,
- ուսանողի մոտ ձևավորել դիվանագիտական-մասնագիտական բառապաշարային իրազեկություն, որպեսզի նա կարողանա որոշակի իրադրություններում և նախատեսված թեմաների շրջանակում հանպատրաստից հաղորդակցվել,
- ուսանողի մոտ ձևավորել մենախոսություն-ելույթ ունենալու կարողություն, որպեսզի նա կարողանա կազմել ինքնուրույն խոսք: Այստեղ դասախոսը հատուկ ուշադրություն պետք է դարձնի ուսանողի սեփական մտքերը տրամաբանորեն և քերականորեն ճիշտ շարադրելուն և դրանք օգտագործելուն,
- ծավալել նյութի յուրացմանը նպաստող երկխոսություն-բանավեճեր,
- ուսանողին սովորեցնել այս կամ այն իրադրության շուրջ զրույց վարել՝ օգտագործելով տարբեր ռեպլիկներ և երկխոսության միասնություններ,

- կազմակերպել սեմինարներ և քննարկումներ ուսումնասիրվող լեզուներով:

ՄՏՈՒԳՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Արաբերենի և պարսկերենի դասընթացի ստուգման կազմակերպման կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում ուսանողի գիտելիքների ստուգումը: Դասընթացի ստուգման կազմակերպման ժամանակ շեշտը պետք է դրվի այն բանի վրա, թե ինչ են սովորել ուսանողները և ինչ կարող են անել: Ստուգմանը ներկայացվող պահանջներն են.

- ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ պետք է կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց,
- պետք է խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը և ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,
- ընդգրկել ստուգողական վարժություններ, թեստեր և առաջադրանքներ, որոնց նպատակն է խոսքային գործունեության մեջ ի հայտ բերել ուսանողի գիտելիքներն ու հմտությունները՝ հիմնվելով ուղղախոսական իրազեկություն բաղադրիչի վրա,
- գիտելիքների ընթացիկ ստուգումը կօգնի ուսանողին գիտակցել իր հաջողություններն ու թերությունները, կնպաստի նրանց շտկմանն ու ուղղմանը, որ, իհարկե, կապված պետք է լինի դասավանդման նպատակների հետ:

ՕԳՏԱԿԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբուչյան Հ, Կարաբեկյան Ս, Գրական արաբերենի գործառական քերականություն, Երևան 2003թ.
2. Ինչպես պատրաստել և իրականացնել ուսանողամետ դասընթաց: Մեթոդական ուղենիշներ դասախոսների համար/ Ս.Կարաբեկյան, Հ. Քոչարյան, Երևան 2011թ.
3. Իսրայելյան Ա., Արաբերեն լեզվի դիվանագիտական-մասնագիտական հաղորդակցման դասընթացի ծրագիր, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2011թ.
4. Լեզուների իմացության /իրազեկության համաեվրոպական համակարգ /Ուսումնառություն, Դասավանդում, Գնահատում, Steering Committee for Education Language Policy Division, Strasbourg, Նոյր գրատուն, 2005թ.
5. Հայ-իրանական «Միհր» ակումբի մշակութային-հասարակական հանդես, Երևան 2009թ, 2011թ.
6. Մանուկյան Ա. Քաղաքագիտական, դիվանագիտական և իրավագիտական տեքստեր, Երևան 2008թ.
7. Շեխոյան Լ, Մելիքյան Գ, Ղուկասյան Վ, Ոսկանյան Վ, Բոյաջյան Վ, Խաչատրյան Ե, Պարսից լեզվի ընթերցարան (հատոր I), Իրանագիտության Կովկասյան կենտրոն, Երևան 1999թ.
8. Շեխոյան Լ, Մելիքյան Գ, Ղուկասյան Վ, Ոսկանյան Վ, Բոյաջյան Վ, Խաչատրյան Ե, Պարսից լեզվի ընթերցարան (հատոր II), Իրանագիտության Կովկասյան կենտրոն, Երևան 1999թ.
9. Տեղեկատվական գործունեություն իրականացնող Պարսից լեզվի և գրականության բարեկամների «Փարսիան» ՀԿ հանդես, Երևան 2005թ.
10. Alaedin Pazargadi, Easy Persian, Book 4, Tehran, 2006. Persian Grammar, Orientalia, Inc. New York. 1944
11. Persian for Foreigners, Taqi Prenamdarian, Tehran, 2005
12. Wright W.A. Grammer of the Arabic Language, Vol 1,2, Cambridge, 1962
13. Yadollah Samareh, Ph. D., Persian Language Teaching (AZFA), Book 4, Tehran, 1989
14. Ziadeh F.J and Winder R.B. An Introduction to the Modern Arabic. Princeton, 1957
15. Березин И.Н. Грамматика персидского языка, Казань, 1853г.
16. Гафар Махмуд, Экстренный арабский: учеб. Пособие, пер. с англ. Н.Ф. Орловой, Москва 2007г.
17. Гранде Б. М. Курс арабской грамматики в сравнительно-историческом освещении, Москва 1963г.
18. Залеман К.Г., Жуковский В.А., Краткая грамматика новеперсидского языка с

- приложением метрики и библиографии, СПб, 1890г.
19. Кузьмин С. А. Учебник арабского языка. Москва 2001г.
 20. Лебедев В. Г., Тюрева Л. С. Практический курс арабского литературного языка. Восток-Запад, 2005 г.
 21. Лебедев В.В., Бочкарев Г.И, Читаем арабские тексты, (Основной этап, Москва 2002г.
 22. Лебедев В.В., Бочкарев Г.И, Читаем арабские тексты, (Продвинутый этап), Москва 2002г.
 23. Общая методика обучения иностранным языкам. Под ред. А.А. Миролюбова, И.В. Рахманова, М.1967 г.
 24. Овчинникова Н.К., Мамед-Заде А.К., Учебник персидского языка, Издательство Московского университета, 1966г.
 25. Оранский И.М., Иранские языки, Изд-во восточной литературы, М., 1963.
 26. Рубинчик Ю.А., Современный персидский язык, Изд-во Восточной литературы, М., 1960 г.
 27. Семенов Д.В. Синтаксис современного арабского литературного языка, Москва 1941г.
 28. Фролова О.Б. Мы говорим по-арабски: Учебное пособие. СПб., 2001.
 29. Халидов Б.З. Учебник арабского языка, Ташкент, 1965г.
 30. Шарбатов. Г.Ш, Ковалев А.А. Учебник арабского языка, Москва 1966г.
 31. Элементарная грамматика арабского языка, сост. И.Д. Ибрагимов, А. Н. Шимкович. Начальный уровень, Москва 2008 г.
 32. Юшманов Н.В Грамматика литературного арабского языка, под редакцией и с предисловием И.Ю. Крачковского, Санкт-Петербург, Юридический центр Пресс 1999.
 33. Юшманов Н.В, Грамматика литературного арабского языка, Л, 1964г.
 34. Яковенко Э.В. Практический курс перевода (Арабский язык) Восточная литература" РАН, Москва 2009 г.
 35. Яшуков. А. М., Методическое пособие по изучению арабского языка, Москва 2006 г.

Բառարաններ և գրուցարաններ

36. Ասատրյան Հ, Պողոսյան Ս, Ժամանակակից արաբերեն լեզվի հոմանիշների արաբերեն-հայերեն համառոտ բառարան, Երևան 1990թ.
37. Զրուցարան Հայերեն-Արաբերեն, Ս. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Երևան, 1997թ.
38. Հովսեփյան Է, Հայերեն-պարսկերեն գրուցարան, Երևան 2001թ.
39. Նալբանդյան Գ, Պարսկերեն-հայերեն բառարան, Երևան 1987թ.
40. A. Aghabakhshi, M. Afsharirad, A. Dictionary of Political Science, Tehran, 2008.
41. Al Mawrid Al Akbar: A Modern English-Arabic Dictionary, By: Munir Baalbaki, Dar Al Ilm Lilmalayeen, 2005

42. Al Mawrid Al Muyassar Arabic-English / English-Arabic, By: Dr. Rohi Baalbaki & Munir Baalbaki, Dar El Ilm Lil Malayin, 2008
43. Al Mawrid Al Muyassar, by Dr. Rohi Baalbaki, Mounir Baalbaki, Dar El Ilm Lilmalayin, Beirut, 2007
44. Collin, P.H. Dictionary of Government and Politics, 1988
45. Dictionary of Arabic Grammatical Nomenclature Arabic-English, by Antoine El-Dahdah, Librairie du Liban 2003.
46. Dictionary of Arabic Verbs, by Dr. Duleim Masoud Al Qahtani, Librairie du Liban Publishers 2003.
47. Dictionary of Diplomatic Terminology English-Arabic with Arabic-English Glossary, by Gamal Barakat, Beirut 1985
48. Dictionary of international relations and conference terminology: English-Arabic with English and Arabic indexes and appendices, by Hassan Abdallah, Beirut 1982.
49. Elias- Modern Dictionary. Arabic-English, Cairo 1954.
50. Mehdi Nowruzzi, A comprehensive dictionary of political terms, English-Persian, Tehran 2009.
51. Wehr H. Arabisches Worterbuch fur die Schriftsprache der Gegenwart, Leipzig, 1956.
52. Баранов Х.К, Арабско-русский словарь, Москва 1957г.
53. Барисов В. М, Русско-арабский словарь, Москва 1995г.
54. Восканян Г.А., Русско-персидский словарь, Москва 2008г.
55. Миллер Б.В./ Персидско-русский словарь, Москва 1953г.
56. Овчинникова И.К., Фуругян Г.А., Бади Ш.М, Русско-персидский словарь, Москва 1965г.
57. Персидско-русский словарь, в двух томах, под. Редакцией Ю.К. Рубинчика, Москва 1970г.
58. Русско-персидский словарь /Сост. И.К. Овчинникова и др., Под ред. Али Асадуллаев и Л.С. Пейсикова, Сов. Энциклопедия, Москва 1965г.
59. Шарбатов. Г.Ш, Русско-арабский учебный словарь, Москва 1964г.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական դասընթացի ուսուցման սկզբունքները	3
Ուսուցման ժամանակակից մեթոդները և միջոցները.....	4
Ուսումնամեթոդական տեխնիկական միջոցները.....	5
Տեղեկատվության ընդունման ուղիները	6
Բառապաշարի ուսուցման և յուրացման մեթոդները.....	6
Ծանոթացում լեզվական նյութին	8
Բառական և խոսքային վարժություններ.....	9
Պահանջներ հմտությունների վերաբերյալ	11
Ստուգմանը ներկայացվող պահանջները.....	12
Օգտակար գրականություն	13
Բառարաններ և գրուցարաններ.....	14

ԻՄՐԱՑԵԼՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՀՐԱԶԻԿԻ
ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԳԵՂԱՄԻ

ԱՐԱԲԵՐԵՆԻ ԵՎ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ստորագրված է տպագրության ք.:
Չափսը՝ 60x84¹/₁₆: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. մամուլ,
տպագր. մամուլ= պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ : Պատվեր՝ :

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: